# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «29» դեկտեմբերի 2015թ.

2015թ-ի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ալեքսանդր Նազարյան | Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի կազմակերպատնտեսական հարցերով մասնագետ. |

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

| | |
|---|---|
| Անի Բազեյանը | Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետի ժ/պ: |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի մեկ անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ալեքսանդր Նազարյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

# ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

## 1. ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Նազարյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 900 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 704 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

| Հ/h | Մասնակցի անվանում | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Այյունեթվորքս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Պուշկին 38/1 շենք 55 |
| 2. | «Նորմա-Պլյուս» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-11/12-15/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը"
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Որոշվեց՝

1. Ալեքսանդր Նազարյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

## 2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

| Չափա-բաժնի համարը | Ապրանքի անվանումը | Մասնակիցների անվանումները և առաջարկած գները՝ (ՀՀ դրամ) | |
|---|---|---|---|
| | | «Այյունեթվորքս» ՍՊԸ | «Նորմա-Պլյուս» ՍՊԸ |
| 1. | Հեռախոսային սարքեր | 756 825 | 540 000 |
| 2. | Հեռախոսային սարքեր | 573 000 | - |

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել համապատասխանաբար «Նորմա-Պլյուս» ՍՊԸ-ին և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին:
2. Որպես ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին**

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Նազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____